ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

28 նոյեմբերի 2015 թվականի N 52-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 111-Ն ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 111-Ն որոշման կատարումն ապահովելու նպատակով.

Հրամայում եմ

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) կատարումն ապահովող Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ ԷԲՊՆ) միջոցառումների ցանկը՝ ըստ վերահսկողների ու կատարողների՝ համաձայն հավելված N 1-ի.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի գերակա խնդիրների կատարումն ապահովող ԷԲՊՆ գերակա խնդիրների ցանկը՝ ըստ վերահսկողների ու կատարողների՝ համաձայն հավելված N 2-ի:

2. Սույն հրամանի հավելված N 1-ում նշված վերահսկողներին ու կատարողներին՝ սահմանված ժամկետներում ապահովել հաստատված միջոցառումների կատարումը:

3. Սույն հրամանի հավելված N 2-ում նշված կատարողներին՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 2-օրյա ժամկետում, համապատասխան վերահսկողների հետ համաձայնեցված, գերակա խնդիրների կատարման ընթացքի մասին տեղեկատվությունը ներկայացնել ԷԲՊՆ աշխատակազմի զարգացման վարչություն:

4. ԷԲՊՆ աշխատակազմի ղեկավար Կ.Ղահրամանյանին՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 5-օրյա ժամկետում ապահովել տվյալ եռամսյակում ԷԲՊՆ միջոցառումների իրականացման և գերակա խնդիրների կատարման ընթացքի մասին ամփոփ տեղեկանքի ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարություն:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ ԷԲՊ նախարարի 2015թվականի
28 մարտի N 52-Ա հրամանի

Ց Ա Ն Կ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունք	Վերահսկողներ	Կատարողներ	Ժամկետը
1	2	3	4	5
1. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 31-ի N 1399-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Էներգետիկ փորձաքննության իրականացման կարգը կհամապատասխանեցվի «Հավատարմագրման մասին», «Տեխնիկական կանոնակարգման մասին» և «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքների պահանջներին	Հ. Հարությունյան	Զարգացման վարչություն	մայիսի 3-րդ տասնօրյակ
2. «Էներգասպառող սարքերի և սարքվածքների էներգախնայողության պիտակավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Կսահմանվեն էներգասպառող սարքերի և սարքվածքների պիտակավորման կարգն ու պիտակի ձևը, ինչը զերծ կպահի սպառողներին թյուրիմացության մեջ գցող գործոններից և կտնտեսի զգալի վառելիքաէներգետիկ պաշարներ	Հ. Հարությունյան	Զարգացման վարչություն	օգոստոսի 3-րդ տասնօրյակ
3. «Էլեկտրական էներգիայի բաշխման համակարգում էլեկտրական էներգիայի ապօրինի սպառման դեպքում սպառված էլեկտրաէներգիայի քանակի հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Կսահմանվի էլեկտրական էներգիայի բաշխման համակարգում տեղի ունեցած պատահարների ընթացքում էլեկտրական էներգիայի արտահոսքի հաշվարկման միացյալ մեթոդաբանությունը	Լ.Շահվերդյան	Զարգացման վարչություն	հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ

4. «Արևային ֆոտովոլտայիկ (ՖՎ) կայանի (կայանների) կառուցման ներդրումային ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Արևային ՖՎ կայանի (կայանների) կառուցման ներդրումային ծրագիրը խթան կհանդիսանա ներդրումներ ներգրավելու համար՝ էլեկտրաէներգետիկական համակարգում տարեկան լրացուցիչ մինչև 100 մլն կՎտ.ժ էլեկտրաէներգիայի արտադրության հնարավորությամբ: Այդ կայանների կառուցման արդյունքում կնվազի Հայաստանի Հանրապետության կախվածությունը ներկրվող էներգակիրներից	Հ. Հարությունյան	Զարգացման վարչություն	դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ

Հավելված N 2

ՀՀ ԷԲՊ նախարարի 2015թվականի
N .....-Ա հրամանի

Ց Ա Ն Կ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

Գերակա խնդիրները	Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը	Վերահսկողներ	Կատարողներ	Ընթացքի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում
1	2	3	4	5
1/1 Տարածաշրջանային ինտեգրացում	- Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման աշխատանքների իրականացում - Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման ծրագրի մեկնարկ. խորհրդատուի ընտրության մրցութային գործընթացի կազմակերպում	Ա. Սիմոնյան Ա. Սիմոնյան	Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն	Յուրաքանչյուր եռամսյակ Յուրաքանչյուր եռամսյակ
2. Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման աշխատանքների իրականացում	- «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ-ի և «Ռուսատոմ Սերվիս» ՓԲԸ-ի միջև «Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի սարքավորումների և շինությունների զննման և մնացորդային ռեսուրսի գնահատման աշխատանքների իրականացման մասին» պայմանագրի ստորագրման կազմակերպում	Ա. Գալստյան	Ատոմային էներգետիկայի վարչություն	Յուրաքանչյուր եռամսյակ

	- Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի սարքավորումների և շինությունների զննման և մնացորդային ռեսուրսի գնահատման աշխատանքների իրականացում	Ա. Գալստյան	Ատոմային էներգետիկայի	Յուրաքանչյուր եռամսյակ
3. Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի շրջանակում երկրաջերմային ծրագրի նախապատրաստական աշխատանքների իրականացում	- Քարքարի երկրաջերմային տեղանքում առաջնային էներգակրի պարամետրերի որոշման համար հորատանցքերի հորատման նախապատրաստական աշխատանքների կատարման համակարգում՝ ըստ ընդունված ժամանակացույցի - Քարքարի երկրաջերմային ծրագրի մշակման և կազմման ժամանակահատվածում հսկողություն	Հ. Հարությունյան Հ. Հարությունյան	Զարգացման վարչություն Զարգացման վարչություն	Յուրաքանչյուր եռամսյակ
4. ARM WGS-84 գեոդեզիական կոորդինատային համակարգի 100 տոկոս ներդնում	- Ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված ընդերքի տեղամասերի կոորդինատային համակարգի համապատասխանեցում WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգին - Ընդերքօգտագործման իրավունքների տրամադրում ARM WGS-84 գեոդեզիական կոորդինատային համակարգով	Կ. Ղահրամանյան Կ. Ղահրամանյան	Ընդերքի վարչություն Ընդերքի վարչություն	Յուրաքանչյուր եռամսյակ Յուրաքանչյուր եռամսյակ